ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Նոյեմբերի 3-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց։

***

**Նոյեմբերի 6-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ։

***

**Նոյեմբերի 10-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը։ «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

**Նոյեմբերի 13-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ։

***

**Նոյեմբերի 17-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն աբղ. Քիլենճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց։

***

**Նոյեմբերի 20-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ։

***

**Նոյեմբերի 24-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլընճյանը։ «Հայր

մեր»-ից առաջ քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հնդիկ Մալաբար Եկեղեցու միտրոպոլիտ Գրիգորիոսը:

***

**Նոյեմբերի 30-ին, շաբաթ.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնին նվիրված, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը:

***

**Դեկտեմբերի 1-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

***

**Դեկտեմբերի 4-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական ներթական հավաքույթ:

***

**Դեկտեմբերի 6-ին, ուրբաթ.**—Այսօր Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ հոգևորականության հավաքույթ, որի ժամանակ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ գերշ. Տ. Խաժակ եպս. Պարսամյանը և ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ գերշ. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը պատմեցին ամերիկահայ գաղութի ազգային-հոգևոր կյանքի մասին: Ապա Վեհափառ Հայրապետը խոսեց հոգևորականության նոր անելիքների մասին:

***

**Դեկտեմբերի 8-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ գերշ. Տ. Խաժակ եպս. Պարսամյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

Ս. պատարագի վերջում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվեց հոգեհանգիստ՝ ահավոր երկրաշարժի երրորդ տարելիցի առիթով:

***

**Դեկտեմբերի 15-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

***

**Դեկտեմբերի 18-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական ներթական հավաքույթ:

***

**Դեկտեմբերի 22-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ ավ. քհն. Մատարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

**Դեկտեմբերի 24-ին, երեքշաբթի.**—Այսօր Մայր տաճարում, Ս. Ստեփանոսի խորանի վրա, ս. պատարագ մատուցվեց ննջեցյալ Ստեփանոս նախավկային: Պատարագիչն էր Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագից հետո, ավանդության համաձայն, Մայր տաճարի միաբան սարկավագները այցելեցին Վեհարան՝ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

***

**Դեկտեմբերի 29-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը:

